



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 9 ՅՈՒՆԻՍ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս Կիս. եւ ողորմեալս քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՍ 103

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ

Օրհնաբանէ Տէրը, ճ՛վ իմ անձս,
օրհնաբանէ անոր սուրբ անունը, ճ՛վ իմ էութիւնս ամբողջ:
Եւ մի՛ մոռնար անոր բոլոր պարգեւները:
Ան է որ կը բաւէ բոլոր մեղքերդ, կը բժշկէ հիւանդութիւններդ:
Ան է որ կեանքդ կը փրկէ կորուստէն,
եւ իր սիրովն ու գթութեամբը կը պարուրէ բեզ:
Ան է որ բարիքներով կը լեցնէ բոլոր կեանքդ,
այնպէս՝ որ միշտ երիտասարդ մնաս, արծիւներուն պէս:
Ինչպէս հայր մը կը գուրգուրայ իր գաւակներուն վրայ,
այնպէս Տէրը կը գուրգուրայ իրմէ ակնածողներուն վրայ,
որովհետեւ ինք լաւ գիտէ մեր կազմուածքը,
եւ չի մոռնար որ հողեղէն ենք:
Արդարեւ մարդուս կեանքը խոտի կը նմանի,
կը ծաղկի այնպէս՝ ինչպէս վայրի ծաղիկը.
Երբ խորշակը անոր վրայ կը փչէ՝ ալ կը դադրի գոյութիւն ունենալէ,
անոր տեղն իսկ չես գիտեր:
Սակայն Տիրոջ հոգածութիւնը անվախճան է,
անոր արդարութիւնը մշտական է իրմէ ակնածողներուն հանդէպ,
անոնց հանդէպ՝ որոնք իր ուխտին հաւատարիմ են,
եւ չեն մոռնար գործադրել իր հրահանգները:
Օրհնաբանէ Տէրը, ճ՛վ իմ անձս:

ՆԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Սմեռասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեցոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ բո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ բո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՅԱԿՈԲ ԸՆՏԱՆԻՔՈՎ ԵԳԻՊՏՈՍ ԿԵՐԹԱՅ (47:1-12)

«Անոնք Գեսեմի երկրին մէջ բնակեցան»: Հերաքրքրականօրէն, այս անուանումը որ կը նշանակէ մօտիկութիւն, անով ցոյց կու տայ, թէ որքան ալ հեռու կրնանք ըլլալ խոստացուած երկրէն, քարքեր քարքեր պատճառներով, այս պարագային սովի պատճառով, բայց եւ այնպէս բնակելու այնպիսի վայրի մէջ որ մօտիկ ըլլանք անոր, որպէսզի անմիջապէս ետ վերադառնանք: Այլապէս կրնանք այնքան հեռանալ, որ նոյնիսկ չկարենալ ժառանգել այդ խոստացուած երկիրը:

Փարաւոն հարցուց Յակոբին. «Քու կեանքիդ փարիներուն օրերը ո՞րչափ են»: Յակոբ պատասխանեց. «Իմ պանդխտութեանս փարիներուն օրերը հարիւր երեսուն փարի են»: Հերաքրքրական պատասխան մըն է, որով ցոյց կու տայ Յակոբ, թէ մարդուս կեանքը պանդխտութեան փարիներ են, որովհետեւ մարդս մնայուն կայք չունի այս երկրի վրայ, եւ իբրեւ այդպիսին մնայուն հայրենիք մը կը փնտրէ, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. «Ասոնք բոլորն ալ օտարներ ու պանդուխտներ են երկրի վրայ» (Եբր 11:13-16):

ՍՈՎԸ ԿԸ ՍԱՍԿԱՆԱՅ (47:13-26)

Որքան ալ սովը սաստկանայ, կրնայ իր ազդեցութիւնը ունենալ, միայն անոնց վրայ, որոնք մարմնական կիրքերով կը շարժին: Անոր համար ալ սովի սաստկանալուն պարտճառով Եգիպտացիները եկան Յովսէփին եւ հաց խնդրեցին: Ուրեմն, այնքան արեւն որ Քրիստոսի կողքին են, թէպէտ սովը կայ ու կրնայ սաստկանալ, բայց Ան պատրաստ է մեզի փրկու հոգեւորը, երկինքէն իջաց հացը:

ՅԱԿՈԲԻ ՎԵՐՋԻՆ ԽՆԴՐԱՆՔԸ (47:27-31)

Յակոբ իմանալով որ իր կեանքի վերջին օրերը հասած են կը խնդրէ, որ զինք Եգիպտոսի մէջ ջթաղէ, «հապա իմ հայրերուս հետ ննջեմ ու դուն զիս Եգիպտոսէն հանէ եւ զիս անոնց գերեզմանը թաղէ»: Սա ցոյց կու տայ, որ Յակոբի փափաքը վերադառնալ է: Խորհրդանշականօրէն, այսինքն՝ մեղքի մէջ չմնալ, որովհետեւ յաճախ Եգիպտոսը խորհրդանշուած է որպէս մեղքի վայր: Ուրեմն, մեղքի մէջ չմահանալ եւ այդպէս ջթաղուիլ, այլ վերադառնալ առ Աստուած: